և հալածօղ երկաբնակաց, և էր չարապախտ. վասնզի 'ի բազում կողմանց թշնամիքն յարեան 'ի վերայ նորա. և զի Արիոսական եղև և թողաւ 'ի ձեռացն Աստուծոյ: Սա խափանեաց զդպրատունսն ի Ստամպօլ, զի գործ անարժան գտաւ 'ի նոսա՝ արուամոլութիւն. և եղև քաղաքին մեծ տրտմութիւն: Յաւուրս սորա 'ի շարժէ ընկղմեցաւ Նիկապօլիս: Եւ ինքն Անաստասիոս դեղակուր մեռաւ:

Ժուստինոս՝ որ և Յուստինիանոս՝ սկսաւ յամի Տեառն ՇԻԸ. ինքնակալեաց ամս Թ: Սա ջերմեռանդ գոլով 'ի հաւատս Բ. բնութեան, զամենայն աքսորեալ Եպիսկոպոսունսն դարձոյց յաթոռս իւրեանց՝ և զԴ.Ժ. եկեղեցիսն նոցա, բազում նեղութիւնս հայոց միաբնակաց:

Ժուստինոս երկրորդ սկսաւ յամի Տեառն ՇԼՕ. ինքնակալեաց ամս ԻԲ: Էր սա երկաբնակ. Սա ասաց տօնել զտօն

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան